# 104. ԴԱՋԱՂ ՊԱՏՈՅԻ ՀԵՔԻԱԹԸ

*Քե մատա՛ղ, էս հեքյաթը ես իմ ընդաճուլն եմ մա՛ցել հըա՛ ցա՛հիլ վախտըխս, Պատվական անըմով մի ղաչաղից. թե ի՞նչ ըլա՛վ, ղո՞րր բյընա՛ց. ես էլ չի ղյղա՛ցի։ Համա ղե անղաճը կան-չած լա՛վ մարթ էր։*

*Մի տարի իրեք հրնղերով բյա՛ցինք կյո̄ղութին անըիլու Մըխակ աըխնը. ի՞նչ անենք, ղո՛րր բյընա՛նք, վըեր մի ղաս ճա-րենք, մըեր հրնղյերտանցիցը մինը ասեց. «Էկե՛ք բյընա՛նք Ոսհան բեկի վրչխարի սո̄ւրո̄ւրերիցը տիրենք, կես անենք»։ Ասըե-ցի. «Տըղե՛ր, նա՛ հենց հին հայտնի բյե̄հնա՛ կյո̄ղերիցն ա, վըեր նըրա՛նից պա՛ն կյո̄ղացողը հըլա՛ մորից ըլել չի»։*

*Ինչքան ասեցի համոզեցի, արհա՛նը ինձ անղաճ չի տը-րին։ Մի չանղ մըթնըըըչերա, վըեր սըհե մատը աչկտ կոխեն, աըենալ չես. կամաց-կամաց բյընա՛ցինք, մոտացանք, վըեր վըչ-խարի մի ղուր կըարենը ու ըըշենը, մըհել աըեհանը հըըես փա-փաղը թեր տըըա՛ծ ծին քըշա՛ծ եկավ, ասըեց. «Արա՛, էտ ո՞վ եք. եա ի՞նչ եք շինըմ»։*

*Էլ կըրացըինը վըեչ, թե մի ցուղար էլա տանը, կապ ընղյա՛նը, մըհել վըեր ասըեց. «Արա՛, ծըեղ չե՞մ հըըցընըմ»։ Իըար ասըմ ենը. «Արա՛, տսենը, թե մըղանից վըեչխար ա կորել ման ենք կյա՛լի»։ Ասըեցինք. «Կորուստի ենը ման կյա՛լի»։ Ասըեց. «Արա՛, ըա կորուսար տռաչ տո՞ւըո̄ւմչը կըհըըցընեն, թե վըեչխարի սո̄ւ-րո̄ւն կըմըտնեն»։ Ասըեցինը. «Դե ուղինք վըեչ, թե քեղ նեղու-թին տանը. Նի մտանք ակը աանը, ասըեցինը՝ վըեր միչին ըլի,*

կըտանենք, վըեր չէ՝ սուս ու փուս անց կըկենանք քյընանք։ Ասըեց. «Մի եկեք կըրակի կուշտը, տըենամ էտ ո՞վ եք»։

Քյընա̈ցինք դըրա̈ ինքը, համա դե տողը ջաներնըմս ա։ Վըեր կըրակի լիսիմը նստըեցինք, տա̈ մին-մին իրեսերնուս մըտըիկ արավ ու ասըեց. «Տըղե՛ք, արթեն ես գյըդա̈ցի. թե տո̈ւք ո՞վ եք, ը՞նչի եք էկել, ծըեր մըիտկը ինձ պարզ ա։ Մարթ կա կյո̈ղութինի ա քյընըմ՝ կյըլո̈խ ա պիրըմ, մարթ էլ կա՝ կյըլո̈խն ա կորցընըմ»։ Ասըեցինք. «Ուհան բեկ, խի՞ ես տըհե ասըմ. մըենք հու կյո̈ղութենի չենք էկել, վըեր տըհե պա̈ներ ես ասըմ»։

Ասըեց. «Դե լա̈վ, էլ իզուր ա̈րթա̈րանալ միք. ես հու նոր էրեգվա խոխեն չեմ, վըեր ինձ խափեք, ես ծըեր սըփաթիցն էլ, ծըեր յորիշիցն էլ արթեն գյըդա̈ցի, թե տո̈ւք ով եք։ Դե անգաճ տըրեք մի զըրից անեմ, վըեր իմ կըլխովն ա անց կըցել. էն էլ իմ լա̈վ վախտըիս, վըեր թըրիս քամակն էլ կըտրեր, աղաքն էլ հու կըտրեր ու կըտրեր։ Տըղե՛ք, էս ինչ վըեր ասըմ եմ՝ քսանհինգ գյա̈ եռեսուն տարվա պա̈ն ա։ Էն վախտը իմ իգյիթ վախտըս էր։ Իրեք հընգյերով քյընա̈ցինք կյո̈ղութին անըիլ, համա մի կըտաղած մարթի ճանգ ընգյա̈նք, վըեր էլ ասըիլու չի։ Իրեքիս էլ փըռնոտեց, կըռներնուս կապոտեց, ամըեքիս կըռնըտակին էլ մի լապատկա տըրա̈վ, էտ էլ պինդ կապըեց. վըեր վե չիընդյընի, ինքն էլ ծիյուն նըստըեց ու աղաք արավ, հետն էլ մի հեյվարա կըտաղած շուն ա կյա̈լի քըմակերնուցըս, վըեր էլ ասիլու չի։

Տա̈ մըեղ քըշեց տարավ։ Էնքա՜ն, էնքա՜ն քյա̈ցինք. վըեր արդեն ծնգերնուս թիլացավ, էլ կարըմ չենք ժա̈ժ կյա̈նք. համա վըեր պըլետը քըմակերնովս շըրթըցնըմ ա, մեյմունըի դայդի ծուլ-ծուլ ըլիլով ղաքին փախչըմ ենք։ Տա̈ մըեզ տարավ հըսցըրավ մի դուղ, ավազոտ տըեղ, վըեր մի ղատ էլա ըըևըմ չի, մըեն մըենակ մի մեծ ծառ կա, էտ էլ թե վըենց ա ըտի տուս եկել, ես էլ չեմ գյիդըմ։ Տա̈ վեր էկավ, ծին ծառիցը կապեց, էն մընի կըռները ետ արավ ու մի հարիր մետրը զենը տարավ պըլոըիկ փոս քանդըիլ տըվավ, խորըցնիլ տըվավ ու ասըեց. «Դե՛, նի՛ մըտըի»։ Տա̈ նի մըտավ, էտ անդեր շունն էլ սըհե չորս դոլովը պըտիտ ա կյա̈լի։ Մըհել էն մընի կըռները ետ արավ ասըեց. «Դե՛, ֆրեղ վըրա̈ տու»։ Տա̈ կաղնըեց, ուզըեց վըեչ։ Վըեր շանը ջալամըիշ արավ՝ էն հա տըրա̈ն հում-հում ուտըեր, նորից վըեր կըցրավ, սկսեց ֆըեղը լըցնիլը մըչև տըրա̈ շըլընքիցը հետ ֆրեղ լցրա̈վ. տըհե սաղ-սաղ թաղեց։ Մըհել տըրա̈ն ասըեց. «Դե՛, տու քանդըիր»։ Տըրան էլ քանդըիլ տըվավ, տըրա̈ն էլ մըտցըրավ էտ փո-

որ, իմ կրօնները էտ աքավ։ Հըմի ինձ ա ասըմ. «Ձըեղ վըրա տուէ»
Ես վըրա չեմ ապրի։ Պըլետով միշկիս շըրթըցրավ ու չանը ջա-
լամրիջ արավ. Էտ անդրերը սրհե օքմու ղայդի խըտըտել ա ինձ
ու կոխ ա ունըմ հեաստ Ինքն ու շունը էրկուսով վե քցեցին.
Ինրան տըվավ, վըեր էլ ասըլու չի։ Վըե կցրավ, թե. «Ձըեղ ա-
ծաա» Դե՛ ջանս ինչ էր տուրը ուտըիլուց եղը էլ ի՞նչ դեմ անըիլ.
Էտ մի հընդյերիս էլ շըլընքիցը հետը թաղիլ տըվավ, մըխել
ինձ փոս կրարըիլ տըվավ, ինձ էլ քըցեց մեշը ու ինքը ֆրեղը
ածրեց։ Իրեքիս էլ շըլընքներնուցս հետ թաղեց, շանն էլ մըեր
կըշտին հիլ արավ, ծիյուն նըստըեց քյընաց։ Էտ շունը եկավ էն
մի հընդյերիս կուշտը կյըլոխը տըրավ իըրա կըլխի շըվաքըմը
ու բընեց մընը էլ սըհե իշար մըտիկ ենք անըմ համա սըրտերնուս
հեսց ա, վըեր էլ խոսկ չենք բըթնըմ, վըեր ասենք։ Էտ բըշեր տըհե
լիսըցըրինք։ Էրսի օրը ռավըետը տըենանք էտ շունը էտ հընդյերիս
իըեսը սըկսեց լիզիլը. լիզե՛ց, լիզե՛ց ու սկսեց տըրա ընդըճներին.
բիթը, իըեռ-միըեսը չիմ ուտըիլը։ Կերավ, պըրծավ, եկավ էն մի
հընդերիս կուշտը։ Տըրա էսեսն էլ լիզեց ու կյըլոխը կերավ ա։ Ե-
կավ իմ կըլխի շըվաքըմը նստեց։ Կյըլոխը տըրել ա կըլխիս շը-
վաքըմը ու սըհե նա ինձ ա մըտիկ անըմ, ես էլ իրան։ Էն մի
ավերան էլ տըենամ կամա՛ց իմ իըեսն ա լիզոտըմ. ասըմ եմ.
«Տըե՛ր աստոծ, ուսեմը սըհե իըեսս էլ շան փայ դենք բլիլ, իըե-
րիցը մընիս էլ ա փըըկութին չիկա՞»։ Տա վըեր խըտոր ընդյած
տըեղը սըկսեց իըեսս լիզիլ, հա ես տըրա անգաճը բիրդան մի
պըինդ բռնեցի, ինչքան ջանըմս ուժ կա՝ հուփ եմ տալըի ու կը-
ծըմ։ Տա սկսեց ինձ դես հըլըրիլ, դեն հըլըրիլը, թափ տալը.
ծիր տալը՝ Ինրան սըհե արավ պիրավ մըշեր ինձ բոշըցրավ։
Վըեր մի կուս հանեցի, էն մին էլ արթեն հեշտ դուս եկավ, ու
դուս եկա։ Էտ շան ըրդիցը փրռնեցի, հըմի վըե՞նց եմ հուփ
տալըի, վըե՞նց եմ խեխտըմ՝ էլ ասըիլու չի։ Ուրխութենից հենց
ում եմ ասել, վըեր էլ ասըիլու չի, բիչ ա մընըմ, թե էն մըեռած
հընդերտանցս էլ դի տամ։ Վերշը տըրա՛ն մի հանդով խեխտեցի։
Մըհել ինչ բամբի փըշեց կյըլոխս, ասեցի՝ դիյերեմ էս ծառըի
վըրա պընջանամ, նոր վե կըկյամ, կըյընամ, վըեր օքմըի չի տըե-
նա իմաց անըի։ Հըլե ես ծառին դիյերեցի մըհել տըեհա հըրես
էտ շան արդեն ծիյով կյալիս ա։ Եկավ մոտացավ տըեհավ՝ էր-
կուսըի կյըլոխը կերած, շունը խեխտած, մինն էլ կա վըեչ։
Մըհել բիրդան ծառի վըրա ինձ տըեհավ, ծին կապըեց ծառիցը
ու եղնես դիյերեց։ Վըեր ճըղանը ես դիյերեցի, նա եղնես եկավ.

դո̈րը փոխվըեցի՝ նա̈ եկավ. տըհե ըռըվըտըհացից մըչևը ձա̈շը մըենք տըրա̈ հետ ճըղնից ճուղն ենք փոխվըմ. լա̈վ ա, ծառն էլ քանըի վըեր գյիդաս մեծ ա։ Ես բըղա̈րել եմ, տա̈ էլ կընըգվըեւ ու կըտաղել ա։ Մըհել մի տըժա̈ր ճուղը կա՝ պացըը՛-պացըը՛ դիյեըեցի էտ ճուղը, համա ընդիյան ո̈ւրո̈ւշ ճուղը քյընա̈լու տըեղ չի̈կա, պըետկա ըլետ էտ ճըղովը վե կյա̈ս։ Ասըեցի՝ յա բախտ յա ղսմատ՝ դիյերիլ դեմ էտ ճուղը, բա̈լքյի հիլ անի, ետ քյընա̈։ Դիյերեցի էտ ճըղան ամենապա̈րա̈կ տըտնըին նստըեցի։ Տա̈ ինձանից քաչ ճըղան վըրա̈ նստըել ա ու դիյեր մըտըիկ ա անըմ։ Մըխելի մըտիկ արավ, մըտիկ, տըենամ՝ կամաց դիյերըմ ա, ինքն էլ ինձանից ծանդըըն ա։ Ասըմ եմ. «Տըե՛ր աստոծ, էս շան տըղեն էս ո̈՞ւր ա̈ կյա̈լի էս պա̈րա̈կ ճըղանը, մըենք էրկուսով վենց դենք մընալ»։ Տա եկավ, եկավ, մի չոըուկ կար՝ հըլե վըետը տըրա̈վ վըրեն, վըեր էն մի ճըղնիցը փըռնըի, չոըուկը կոտըրեց ու տա̈՝ թըըըմփ, ըտիյան վըեր ընդյա̈վ։ Հըմի վըենց եմ ուըխացել, վըեր ուրխութենից քի̈չ ա մընըմ, թե ես էլ տըրա̈ եդնա թըռչեմ։ Կամաց վեր եկա տըրա̈ն մոտացա, տըենամ՝ հասած տանձըի ղայդի շաղ ա հընցել։ Տըրա̈ շորերը հանեցի հաքա, կյըլո̈խս վըետաշորով փըթաթըեցի ու նստըեցի մըչևը պինդ մթնեց։ Տըրա̈ ծիյուն նստըեցի ու ղընթըղեն բոշ արի, ասեցի՝ սըրա̈ տըրո̈ւնչ հերն էլ ընըծա̈ծ, ի՞նչ կըլի, կըլի. տըենամ վըերդի դի՞ տանըիլ։ Էտ ծին քյըլնա̈ց. քյընա̈ց ու մի տըռա̈ն կաղնեց։ Ասըեցի՝ էս անպայման սըրա̈ տո̈ւռն ա, նա ախպըեր պա̈ն կունենա իմ վերչը կըտսըն։ Մըհել ինքս ինձ սըիրտ եմ տալըի, ասըմ եմ՝ ինչ կըլի կըլի. ծին մի քիչ կաղնեց ու խըըխընչաց։ Էտ խըըխընչոցի վըրա̈ մի կընիկ տո̈ւս եկավ, ասըեց. «Ա՛յ մարթ, էտ ի՞նչ ըլա̈վ քիգ. էտ խի՞ էտքս հղացար»։ Ասըմ եմ. «Ը՞մմ»։ Ասըմ ա. «Էտ ի՞նչ ա ըլել. ըլետ կեոչիտ ցավը փըռնե՞լ ա»։ Ես ըլետ. «Ը՞մմ» եմ անըմ։ Տա̈ վազ տալով եկավ ինձ վե պիրավ, ասըմ ա. «Դե տո̈ւ քյըրնա տուն, ես ծին կըտանեմ կյո̈մը, զատ կըտամ»։ Ես վեր եկա քյա̈ցի տուն, տըեսա ճա̈շ ա էփել. մը լա̈վ կուշտ կերա, շորերըս հանեցի կյըլո̈խս մը լա̈վ փըթաթեցի, վըեր մըենակ աչքերս ա ըրևըմ, տըեղը պա̈ց արի՝ մըտա մեչը, տա̈ եկավ։ Ցորղանը քաշել եմ կըլխիս ու տաք արել։ Տա̈ քանըի ուզըմ ա պա̈ց անըի, խոսա, ես ասըմ եմ «Ը՞մմ» ու նեղացած քաշըմ կյըլոխս ծածկըմ։ Ի՛նչ հըըցըըավ, ես «ը՞մմ» արի, ի՛նչ խոսաց՝ ես՝ «ը՞մմ» արի։ Համա ղե սըֆաթը տըեհել եմ՝ մի սո̈ւրո̈ւն, ջա̈հիլ կընըիկ ա, վըեր էլ ասըիլու չի, վըենց վըեր մի

աստու հըրիշտակ ըլի։ Մըտկըմս ասեցի. «Էրանըի քու տուրսմ-չըս։ Էտա էտ խեղչը տըեսավ. վըեր ես զատ չեմ խոսըմ, ճըրաքը հընդըրավ չորերը հանեց, էկավ ծոցս մըտավ, սկսել ա ճիտ անըի-լը, պըչպըչորիլը. «Մարթ ջան, էտ ի՞նչ ա ըլել, ախըր տու ըսկի ըսօրվա պըես չիր ըլել։ Ինչքան ատամըտ ցավըել ա, հետս խոս-ցըել, հաղ ես արել»։

Ըստեղ կըլխի ընգյա, վըեր տըրա սըիրտը պան ա ուզըմ։ Վըեր տըրա ուղածը չավ տըվըի, տա ասըեց. «Խըղճա՛յ, ըսկի ըսօր-վա պըես ըլել չէր. էս ի՞նչ լավն ես ըսօր», ու ինձ պինդ խըտըտ-ըեց։ Ասեցի. «Ա՛յ կընիկ ջան... Տա ծըեռաց ծըեներցս ճընանչեց, վըեր ես ուրուշ եմ. մի պըինդ ծըվաց ու ասըեց. «Վը՞ի. Ֆըեղը լա՝ կըլխին»։ Ասեցի. «Ա՛յ կընիկ ջան, դե էտա ըախտ էր, թե ինչ էր՝ տու ըսօր իմ կընիկը սառաըր, սըհը-սըհե պան ա պըտահել։ Հը-մի ես իմ ծըեռովը, իմ վըեռովը, իմ կըլխովը եկել եմ քու կուշ-տը, թե ուզըմ ե՞ս իրար առնեք, ես՝ քու մարթը, տու իմ կընիկը, թե հու չէ՝ տու գյիդաս, հենց ըըհաթիս շորերս հաքնըմ եմ՝ քյը-նամը։ Է՞հ, էն համը վըեր նըրա պերնըմն ա մընացել, էլ վըերըի հիլ կանըի. ծեն չի հանըմ, տաղ ա արել, համա դե ինձ պըինդ խըտըտել ու մի քիչ մընաց. ասըեց. «Դե, վըեր ըըսմաթը, ըախ-տը մըեզ էս քըշեր իրար արժանըցրավ, թող ըստիյան դենը մըչև մեռնիլնեընըս էլ արժան անըի ու արժան անըի»։ Տա՛, վըեր տը-հե ասըեց, ես էլ տըրան պինդ խըտըտեցի, պըչպըչըրեցի ու էտ քըշեր մըչև լիսը մընենք իրար հետ հաղ արինք։ Համա ըլետ իրարից կըշտացանք վըեչ. ես կըլխի ընգյա, վըեր տա նըրանից էրված ա ու անըրավարար ա ըլել, աչկը սկի կըշտացած չի ըլել, տըրա մը-հար էլ ինձ պըինդ կըպավ։ Ու տըրա հետ մի տարի ապըեցինք։ Մի տարուց եդը մըեր ըլած չըլածը ծախեցինք ու էտըան հարստու-թինը վըեն կալանք, էկանք մըեր տունը։

Մի տարուց եդը, նորից իրեք հընդյերով քյընացինք ուրուշ երգյիր կյողութինի։ Էտ կյողութին անըիլու վախտը մըեզ փըռ-նացին, տարան։ Մընք էլ ասըեցինք, վըեր խոսկը մին կա-նենք, վըեր իրար ճընանչըմ չենք։ Վըեր ինձ տարան քըննեցին, թե՝ ի՞նչ մարթ ես, ասըեցի՝ ես եկել եմ ըստեղ աշխատըեմ, տը-հանց էլ ըստեղ պըտահեցի։ Ասըեցին՝ ինչ տանք, մըեզ քյոմակ անըես։ Ես էլ ասըեցի՝ էսքան փող, տըրա մըհար էլ ինձ ըըրա-խեցին։ Ես քյացի մի քանըի վախտ աշխատըեցի ու մի լավ սու-րան կընդյա հետ դուստըի փըսակվըեցի. տըրա պարեկամը մեծ մարթ էր. նըրա միչոցով էտ էրկու հընդյերիս ազատըել տըվըի։

Համա ըլետ փըռնվեցին։ Մի ամըռեն եղը, էս կընիկս հիվընդացավ ու մըեռավ։ Էլ ասըիլ մի, թե էն տըեսակ աշխար եմ ընգյել, վըեր մարթն ա մըեռնըմ՝ կընիկն էլ հետն են թաղըմ, կընըիկն ա մըեռնըմ՝ մարթին էլ հետն են թաղըմ։ Դե ես էլ ի՞նչ դեմ ասըիլ, ընգյել եմ էտ աշխարհը՝ տըհա̈նց օրենքին էլ պըետք ա ուզած-չուզած հըպատակ ըլեմ։ Տըհա̈նք մի մեծ յաշիկ են շինըմ, սաղին իրան մի ամսվա, դյա̈ երկու շա̈փտըվա ուտըիլիքով տըրա̈ միջին են տընըմ, մըեռածրին էլ զուգումը ու մի խոր անտակ ֆըև։ կա, ընդիյով ճոպաններով կախ են անըմ, ճոպանը քըշըմ են հանըմ, նըհա̈նք էլ ինչ կըլեն՝ կըլեն։ Պիրին ինձ ու իմ էտ կընգյա̈նը տըհե սորին։ Հենց իմ էտ պաշարը պըրծըմըիլու վըրա էր, վըեր տըեհա էտ օրը մի մեծ ղըըթա̈րա̈ծ յաշիկ էլ կախ արին, մը լա̈վ նախշած ղուրա էլ կախ արին։ Վըեր վե տըրին, քյա̈ցի մոտացա, ասըեցի՝ մի տըենամ էս ով ա մըեռել։ Մըտիկ արի տըեհա էտ քաղաքի դուրեռնատորն ա մըեռել, կընգյա̈նն էլ հետն են թաղել։ Համա ի՞նչ կընըիկ ա, վըեր էլ ասըիլու չի, մարթ ղիմիշ չի անըմ հետը խոսա, էնքա՜ն սուրա̈մ, էնքա՜ն լա̈վը. մի բոյ, մի րուսաթ, մի աչկեր, մի պերան, մի սըփաթ ունըի, վըենց վըեր մարթ ղաստըի նըկարի տընի ընդի։

Տըրա̈ն սըիրտ տըվի ասըեցի. «Վախի՛լ մի, մըենք ըստի մընալ չենք, ինչ ուզըմ ա ըլի, ես քեզ լիս աշխար տո̈ւս կըպիրեմ»։ Տըրա̈ կըռնըիցը փըռնեցի տո̈ւս պիրի, էտ ուտըլիքը կըրեցի իմ կուշտը։ Ես ինձ մըհար տըեղ եմ շինել էնքան լա̈վ-լա̈վ շորեր կա, վըեր էլ ասըիլու չի։ Տըրա̈ հետ ըստի մի տասը օր ապրեցինք։ Տա̈ արթեն ինձ սըվըրել ա, հենց իրար սիրըմ ենք, էլ ասըիլու չի։ Ես արթեն կըլխի եմ ընգյել, վըեր քըշերները շամավար ա կյա̈լի էտ ջա̈նդա̈քներիցը տանըմ, համա դե էտ կընգյա̈նը պա̈ն չեմ ասըմ։ Վախըմ եմ վըխնիլուցը էլ քընըի վըեշ ու մըտածըիլուցը շա̈շվի։ Մի օր էլ ինձ հենց քաղցր, հենց նազանքով ասըեց. «Ազի՛զ շան, մըեր ուտըիլիքը մի էրկու օրվա անշախ հերիք անըի»։ Տըրա̈ ասածը հենց սըրտիս դա̈րդ տա̈ռավ, վըեր լիս ըշխարըմնի ըլել քըշեր-ցիրեկ քընըիլ չի, կըշխատըի կըտանըի իրան կըտըի, կասըի. «Իմ ազիզ աչկի լիս, մըտածըիլ մի՛, առ պիրել եմ՝ ի՛նչ ուզըմ ես»։

Համա դե հենց տըեղ եմ ընգյել, վըեր ի՞նչ կարամ անըեմ։ Ասըեցի. «Ազի՛զ ջան, դա̈րդ մի անըիլ, էքուց քըշեր մընք էլ քյընըմ ենք»։ Թե վըենց ասըեցի. «Տո̈ւ ցիրեկը քընըի, վըեր քըշերս կըրենաս կյա̈ս»։ Տըրա̈ն քընըցրի, ես մըռըլներիցը մինը էտ ջա-

Նավարի ճըմփըի վըրա՛ ալըի։ Մըեր քըշեր-ցըրեկն էլ էն ծակիցն ա մա՛շըուր անըմ, անչախ-անչախ մի քիչ ըըժըըժըմ ա, գյա՝ մըշուշին տալըի։ Էտ հըվըքոտած շորերիցը թոկի պես պա՛ն շինեցի ու կապըեցի էտ մըռըլի էրկու վըետըիցը, ասըեցի՝ սըրա՛նից եա կփըռնեմ, նըրա մըհար էլ սաղ շորեըը իրար բընդըընդո՛րեցի՝ տափանըի պըիս պա՛ն շինեցի, վըեր կապըեմ իմ էրկու վըետիցը, վըեր նա՛ էլ տըրա՛ վըրա՛ նըստըի։ Սաղ լավ օսալարի պըրծա։ Արթեն մա՛շուր արավ, վըեը մութը ընգյա՛վ, նըրա՛ մըհար, վըեր էտ մըշուշի թիքեն էլ կըտըըվեց կըլխներիցս։ Տըրա՛ն էլ հենց եմ կրպըեւ, հենց եմ սվըըմ, վըեր ի՞նչ ասըեմ՝ ըըեխի պըես, իմ ջանիցն էլ թանգ ու ազիզ եմ սիրըմ։ Էկա կըշտին նստըեցի, ծըեռըս տարա կուռը, փըռնեցի կամաց էրկու ծըեռըմը՝ մարմանդ սըղալըմ եմ։ Տա՛ կամաց ժա՛ժ եկավ ու հըլո՛րվեց էն մի կոխկի վըրա՛, տըրա՛ն կամաց ասըեցի. «Ազըի՛զ ջան, ըա վըե չես կենըմ, արթեն քյընըմ ենք»։ Տա՛ ծըեռաց վըե թըռավ նստեց, ինձ փըթաթվըեց, պըշպըշորեց, հենց գյըղա՛ցավ, թե փափուկ ֆայտոն եմ պիրեւ ճուխտ ծիյանը լըծա՛ծ, իրան մըհար վըեր նստի քյընա։

Ասըեցի՝ գյիդըմ ես ըսօրի ըովըետից մըչև հըմի քյա՛ցել եմ էս անդեր տըեղը։ Մի ջանավար մարթ կա, նա՛ պըտահեց ասըեց. «Ես ծըեղ լիս աշխար տո՛ւս կըպիրեմ. թաքուն, հենց լի վըեր տո՛ւք ճըմփըին ծըպըտար վըեչ։ Թե չէ ըստե– տըեր կա, էս չիմ նըրա՛նն ա, վըեր մա՛նա՛ ծըեռաց ինձ էլ ծըեղ հետ կըկըտորի։ Ուրեմն ցավըտ տանըեմ, սամսեն ծըպըտաս վըեչ, հազըտ էլ կըկյա՛, հաղաս վըեչ, փըռըշտոցըտ էլ կըկյա՛. փռըշտաս վըեչ, մըչևը լիս աշխարը տո՛ւս կյա՛նք»։ Էս չիմ նըրա՛ն սուտ ասըմ եմ, վըեր նա՛ սուս անըի, բիրդան էտ ջանավարը խըըտընի վըեչ, դյա՛՛ մըեղ բըրախի ճըմփըի կիսին, դյա՛՛ մըեռելին հիլ անի, մըեղ փըռնըի։

Հըմի ես էլ չեմ գյիդըմ, թե վըե՞րդի կըտանըի, ինչ կըլինք։ Վըերըշը մին ասըմ եմ՝ յա բախտ, յա ղըսմաթ, կամ մահ կըլի, կամ՝ ազատութին։ Մին էլ ինձ հույս եմ տալի, ասըմ եմ՝ էտ անգերը հա՛լբա՛թ մըեղ մի տըեղով լիս աշխար տո՛ւս կըպիրըի հու։ Էնքա՛ն ես իմ մասին չեմ մըտածըմ, ինչքան տըրա՛։ Ասըմ եմ՝ բա տփսուս չի, էս զայգի մարալը ըստի կորչի, ջանավարի փայ տա՛ռնա՛։ Էս անդրեը նեղ տըեղը մարթիկ իրար հետ ջանով չիգյա՛րով են խոսըմ, համա նըհե տըեղը չէ՛, վայ թե ճուրո՛ւշ տըեղ էտ կրնըիկը ինձ պըտահած վախտը սըկի բարև էլ չէր տըվել։ Էտ ա ասըեցի՝ «Ազի՛զ ջան, ես էն մարթըի վըետիցը դեմ փըռնիլ, տո՛ւ

էլ կընըստես էս շորերի վըրա̈ ու էս օղիցը պըին. կըփըռնըես, էտ օղն էլ քո վըեսեցը դի կապած ըլի։ Դե հըմի ի՞նչ խոսալըիք ունըես, խոսա, ուըրդի, վըեր եղով էլ խոսաս վըեչ, մըչևը լիս աշխար տ՞ուս կյա̈լըա։ Ըստեղ մինհա տըրա̈ սըիրտը կոտըրվըեց էլ գյիդըմ չե՞ք Ոն խի, կըլխի ըկ՞վ, վըեր մըեր ճամփորթութինը անհույս յա բախտի պա̈ն ա, թե ինչ էր՝ ես էլ ուզեցի վըեչ իրան չատ հարց ու փորց անըեմ, վըխցա լա̈ցը կյա։ էտ օղլակը քըցեցի վըետներս, տըրան նստըցրի էտ շորերի վըրա̈ պըինդ կըպկըպոտեցի, մինչկովը փըթաթ տըվի, ասըեցի՝ դե էս օղիցը պըինդ կըփըռնըես։ Ես էլ կախ ընդյա̈ էտ մըռլըի վըետից կապած թոկիցը ու ճամփա եմ պահըմ. թե ո՞ւմ ճամփեն եմ պահըմ՝ ես էլ չեմ գյիդըմ. Ինձ ու ինձ մըտածըմ եմ, ասըմ եմ՝ լա̈՛վ, էս ա էս ջանավարը նկավվըեչ, էս կընըիկը ի՞նչ կասըի. ասըիլ չի՝ էս մարթր ի՞նչ սուտխոսան ա։ էտա տըհե երկուսըս էլ սուս ենք արել ու իմ մըակովը հա̈զա̈ր ու մի պա̈ն ա անցկենըմ։ Հըմի էտ անդեր ճամփա տահիլուցր փիս պա̈ն չիկա, մի սըհաթը մի տարի ա ըռևըմ օքմու աչկին։ Քըշերվա մի վախտը մըհել մա̈նըմ եմ մի ղատ ա կյա̈լի։ Մըտքըմս ասըեցի՝ էկավ։ էտ ա տա̈ փըռնըել ա՝ քաշըմ ա, տընքըմ ա, ղոռըի ա մըեղ ժա̈ժ տալըի։ Ասըմ եմ՝ վայ թե էտ անդըերը կըրենա վըեչ տանըի, բըրախի։ Համա չէ, թե էտ մըեռելի ինչ տըեղիցը խըտըտեց, վըենց փըռնըեց՝ գյիդըմ չեմ, տըեհա քաշեց։ Հըմի էտ անդերը հենց տընքըմ ա, հենց տընքըմ ա, հըլեյի թե օքմըի ըլի, քիչ ա մընըմ, թե ասըեմ՝ արա՛, արի տու մի քիչ ղինջացի, մըհել ես կյա̈մ քաշեմ։

Սա̈ ղինջանալով, ղինջանալով մըեզ տարավ, տարավ։ Անջախ-անջախ տըեսանք մըշուշին ա տալըի հեռու տըեղ, վըենց վըեր լիս ըրեվալըիս ըլի։ Ես մի քիչ սըրտըպընդեցի, տա̈ տարավ, տարավ, մըհել տըեհանք լիսը տուս էկանք։ Վըեր լիսիմը էտ ջանավարին տեհա վըե՞չ լո̈ւզ̈ու կապ ընդյա̈վ։ Մըհել վըեր բիրգան էտ կընիկս ծըվաց վը՞եչ ու «վա՛յ» արավ, էտ շանավարը տըրա̈ ծըվոցըի վըրա̈ հիլ արավ ու փախավ։ Մըտկըմըս ասըեցի՝ հա̈լբա̈թ լա̈վը էտ էր, թե չէ մըենք սըրա ծըեռիցը պըրծընողը չինք, մըեզ էլ դեր ուտըիլ։ Հըմի տըրա̈ն խըտըտըել եմ՝ ազիզ ջան, վախիլ մի, զատ չիկա, փախավ, քյընա̈ց։ Տըրա̈ ուշկը քյա̈ցել ա, վըեր ընգյել։ էտա ընգըճներիցը քաշիլով մի հանգով տըրա̈ն ետ պիրի։ Տուս եկանք լիս աշխար։ Ծըեռք կարըմ չենք, թե իրար մըտըիկ անենք, էնքան մըթնըմը կըցել ենք հըմի լիսը աչկերնուս ծակըմ ա։ Կամաց-կամաց աչկերնուս պա̈ց ա-

րինք, ի՞նչ տըեսնանք՝ մի խո՛ր ձոր ա, մի քարափնըչ ա, վըեր էլ ասըիլու չի։ Մի հեյվարա վարար կյետ էլ քյընըմ ա, վըեր աստոծ հեռու տանըի։ Մի հարմար տըեղ նըստեցինք. հըմի լիսիմը մը լա̈վ տըրա̈ իրեսին մըտըիկ եմ անըմ՝ էս զա̈յդի սուրուն կընըիկ.— ասըմ եմ,—ըշխարըմս վըե՛շ ըլել ա, վըե՛շ էլ կըլի։ Հենց ենք ուրխացըել, նըկուսըս էլ վըեր էլ ասըելու չի. էն իրեք տըըեկան ըրեխանց պըես իրար խըտըտըել ենք ու իրար պըչըպըշորըմ։ Մըխելի դիսջացանք ու կյետի ղըրաղնըրվըեր ճամփա ընգյա̈նք։ Քյա̈ցինք, քյա̈ցինք էտ անդըեր քարափներին վըե՛շ հատնիլ կա, վըե՛շ վերչ։ Մըհել մի տըեղով պուճուր կեծան ըրեվաց։ Ասըեցի՝ տըրի էս կեծաններին քյընա̈նք, հա̈լբա̈թ սա մըեզ մի տըեղ կըհըսցընի։ Էտ կեծանը ընդյա̈նք ու քյա̈ցինք, ըրդյընա̈ վախտը դուզը տուս եկանք։ Էտ էլ. տըրա̈ տըեղը մըեռնըի, ի՞նչ դուզ, վըե՛շ տուտր ունըի, վըե՛շ պուճախ։ Թե վըե՞րդի ենք քյընըմ. ո՞ւր ենք քյընըմ, մըենք էլ չենք դիդըմ։ Էտ ա, վըեր գյիդըմ ենք լիս աշխար ենք տուս էկել, ուրխացել ենք։ Մըխելի էլ քյա̈ցինք, մութը կոխեց։ Հըմի վըե՛շ կըրակ կա, վըե՛շ ճըրաք, վըե՛շ հաց, վըե՛շ ճուր։ Մըենք էլ հա՛մ սոված ենք, հա՛մ բըզա̈րա̈ծ ենք։ Մի բութա տըեղ ճարեցի ու սկըսեցի չոր խոտ հըվաքիլըր։ Հըվաքեցի, էնքան թուփ արի, լա̈վ փըռեցի, վըեր տակերնուս փափուկ ըլի։ Հըմի ուզըմ եմ վըրըերնուս գատ ըլի. մըխելի հըվաքեցի վըրըերնուս ծածկեցի։ Տա̈ բըզա̈րա̈ծ էր. խոխճր ծըեռաց քընեց։ Կյըլո̈խը տըըել ա դո̈շիս, մի ծըեռն էլ ճըտո̈վըս պըինդ պատատըվել ու հըըիշտակի պըես քաղցըր քընել ա։ Ես էլ էրկու ծըեռս իրար եմ հըքցըրել, կըլխիս տակին տըըել ու մըիտկ եմ անըմ՝ տըեսնաս, էն մի կընըիկս ի՞նչ ըլա̈վ, դո̈ըը քյընա̈ց, սաղ ա, մըեռած ա, մարթըի ա քյա̈ցել։ Հա̈զա̈ր ու մի պան եմ տըհե մըտածըմ ու տըհենց էլ աչկս կըպցըըի։ Լիսացավ. ման էկա չոր մըրքից, պա̈նից քըթա̈, պիըի լա̈վ օսալ կերանք ու ճամփա ընգյա̈նք Արա՛, էկանք, էկանք՝ մըհել հեռվըից տըեսնամ էն ծառը ըրեվաց, վըեր առաչի տըեղը, նըրա̈ քըշտին մըեզ իրեքիս սաղ-սաղ թաղել էր։ Հենց ուրխացա, հենց ուրխացա, վըեր էլ անըմը տալու չի։ էկանք ըտի տըրա̈ն շըհսանց տըվի, թա̈մուզ պատմըեցի ու ասըեցի՝ էլ մըտածըիլ մի, ըռուդյունը մը լա̈վ տըեղ ղոնաղ ենք։ Էկանք էնտըեղը, վըեր առաջի կընոյա̈նս հետ ապըել ենք, քըշերը ըտի մընացինք, լա̈վ կուշտ կերանք կըշտացանք, փափուկ յորղան-դոշակըմ առաչի անքամ ուրուր կշտի տանը իրար հետ քընեցինք, ըռավըետը վըեն կեցանք, հաց պա̈ն կերանք ու ճամփա ընգյա̈նք դըբա̈ մըեր տուն։ Բուդյունը հասանք տուն, կընիկս ուրխությինից էլ գիդըմ չի,

թե ինչ անըի. Հաց ըվըրավ, ճաշ էփեց, կերանք, խըմըեցինք, ուրխացանք, հըմի տըևնամ էս թաղի քիթ-մըռութը կախ ա, հինն էլ հըլա գյիգըմ չի, թն էտ ո՞վ ա։ Էրկուսին էլ կանչեցի կուշտըս, ասըեցի՝ ծըեզ՝ էրկուսիդ էլ կյանքիցս շատ սիրըմ եմ։ Էրկուսըտ էլ փմ կընանիքն էք, ամըեն մինըա մի բախտով ու մի ճըկատըիկյըրով ինձ ռաստ եք էկել, հըմի, եթե տուք էլ ինձ սիրըմ եք էնքամ, ինչքամ ես եմ ծըեզ սիրըմ, ու իրեքս էլ մի մարմին, մի հուքի կըլենք իրար հետ. եթե չէ՝ ես ինձ կըսպանեմ ըստեղ, տուք ինչ ուզըմ եք արեք. Նըրա մըհար վըեր վը՛եշ քեզանըից կարամ ծըեռը քաշեմ, վըե՛շ էլ նըրանից, էրկուսիտ էլ մին մընիից շատ, կյանքիս չափ սիրըմ եմ։ Վըեր ըըհե ասըեցի, տըհանք էրկուսն էլ ինձ պինդ խըրաըտեցին ու պըշպըշորեցին ու իրար հետ ասըեցին, վըեր տու առանց մըեզ կարալ չես մընաս, մըենք էլ առանց քեզ չենք կարալ մընաս։ Ըտիյան դենը մըենք ըըկսեցինք խաղաղ, հանգյիստ սերով իրար հետ ապրիլը, տարին անց կըցավ տըհանք ամըենքը մի տըղա պիրին։ Էրկուսն էլ մին մընից լավը, մին մընից թըմըըըիկ, մին մընից սուրում։ Բեխեքը տառել են էրկու տըրեկան, դոըը քյընըմ եմ, խնձանըից պուկ չեն կյալի, էրկուսն էլ խըտըտիս են։ Օրերի մի օր էրկուսըին էլ խըտըտած տըռանը նըստըել եմ։ Հընգյերտանցըիցըս մինը եկավ, թե. «Արա՛, արի մի տըեղ քյընանք»։ Թե. «Վըերդի»։ Թե. «Ֆըերսի տըեղ եմ գյիդըմ, ֆըերսը իրեք հընգյերով դենք անըիլի, ինչ ճարեցինք՝ հալալ կես դենք անըիլ»։ Ասըեցի. «Լավ»։ Էքսր քըշերըով իրեքով քյացինք, հասանք ճըմփըի կեսը, տըհանք ասըեցին. գյիդը՞մ ես, կյուզութինի ենք քյընըմ։ Էտա նեղացա, ուզեցի ետ տառնամ. Նըրա մըհար, վըեր արթեն աչկս վըխըցել ա։ Տըհանք էնքան թառըթոհմաթ արին, վըեր ընգյա հետերնուն ու քյացինք։ Համա դե որոշել չենք հըլա, թե վըերդի քյընանք։ Շատ վըեր ման եկանք, զատ չի պըտահեց, անձրևն էլ նի ա կալել, մընք էլ քոլըմն ենք։ Արա՛, մըհել մի մեծ քարափ պըտահեց, տըեհամք էտ քարափըի տակին մի մեծ պըլոլիկ ծակ կա, մի մարթաբոյ կըլի։ Նի մըտանք տըեսնանք՝ մի հեյվարա կյոմփի պըես տըեղ ա, վըե՛շ տուտը ունըի, վըե՛շ պուճախ, միչին էլ արթեն րեվըմ ա վըեր վըեչխար պահող կա։ Էն մի հընգյերը ասըեց. «արա՛ տըե՞հար, կյիր վըեշ, էս ա ֆըերսը իրան վըետովը կըկյա կըշտերնուս, վըենց ըլի վըեր կըռենանք վըեշ ամըեքս մի քանի վըեչխար տանենք»։ Միչին էլ կրակ ենք արել ու ղրաղին համ չորերնուս չորցընըմ ենք, համ էլ զըրից անըմ։

Հըլե մըթնեց թըչէ, մըհել տըենանք մի հեյվարա միըչկանի

Բախմփգյոզ մարթ, վըշխարի սուրում քամակը քըցած, էկավ վըեչխարը քաշեց էտ էրի մեչը, հեյվարա ճըղացըի մեծ քարը էրի ծակին դեմ արավ ու էկավ էտ կըրակի կըշտին նըսարեց։ Հըլե մըեզ տըեհավ թե չէ, սըհե ըրավ՝ ուխա՛յ, էս ինչ լավ հողածընի մըսի խըրոված գեմ ուտըիլ ըսօր։ Մըենք ծըեոք կըլխի չի ընգյանք, թե նա ինչ ա ասըմ, համա մըխեյան եզը, վըեր վըե կցավ մի հեյվարա կըրակ արավ՝ էտ սաղ էրր պուճախից պուճախ լիս ու տալըի ու իրեք հատ հիյվարա, լոմըի պըես շամփուր տըրավ կըրակին, նոր կըլխի ըլանք նըրա ասածը, թե ինչ էր ասըել։ Տողը ջաներընուս կալավ, համա դե ծըեռներընուս զատ չիկա, ինչ անենք, դյիղըմ չենք։ Թե իրեք-չորս տըրեկան ըեխեն մըեր դարին կարա ծեն հանըի, մըենք էլ նըրա ղաքին կարանք ծեն հանենք։ Ամըեն մի ըըլակը մըեր անդամիցը հաստ ա, վըեր կյալիս ա կոխքերընուս կաղնըմ, մըենք նըրա կըշտին հըլեի կատվըի ճուտըեր ըլենք։ Մըտիկ ենք անըմ՝ փախչիլու տըեղ չի ունըի. էտ ծակի ղաքին էլ մի հեյվարա ճըղացըի քար կա, վըեր օխտը տարի էլ կենա մըենք կարալ չենք ժաժ տանք։ Նըստել եմ ու մըիտկըն եմ անըմ՝ արեր աստոծ, էս մի տըևդիցն էլ ինձ ազատըի, էլ թե ես սըհե պաներ անըեմ, սըհե մտկով մի տեղ քյընամ՝ ես իմ հերնը մըեռը սըհե-սըհե անըեմ. թե էլ ծուըշի մի մաղըին ծըեռը տամ՝ ես շանըից ծընըված եմ, պըետք ա նըստըեմ ու իմ հալալ քըրտըինքովը ապըեմ. մի կըտոր հաց ըլի, իմ տանը անզաճս դինճ ուտըեմ, ճուխտ կընգյանո ճիտ անըեմ ու քընեմ։ Մըհել տըեհանք տա քյընաց մի տուռը պաց արավ, մըչև էտ մըենք դյիղինք, թե հենց էս ա սըրա ապըիլու տըեղը, համա դե տըեհանք չէ՝ միչին առանձին օթախի պըես պաներ էլ կա։ Տա վըեր քյընաց, ըտի իմ էտ հընդերտինքը ղըրաղ ին ըլել՝ վըշխըրընըեըի ղաթըմը տապ արել, թե վըե՞նց են քյացել, ես էլ չի բըրավճուրդ արել, հենց մըտկով տարված եմ ըլել։ Բիրդան վըեր մըտըիկ չի արի տըեհա տըհանք կողքիցըս ղըրաղ են ըլել, ես մըենակ եմ, էլ վախիցը քիչ ա մընըմ, թե ըըղավըեմ ասըեմ՝ ծըեր տունը չի քանդվըի, բա խի՞ չի ինձ էլ հետըերնուտ տարաք։ Մըհել տըենամ տա հըրեխ մի աման լիքը աղ ծըեռին էկավ։ Վըեր տըեհավ ես մըենակ եմ՝ կընդվըեց, պեըանը փըրփըըեց ու ընգյավ կյոմի մեչը։ Ըշկըհարիլով քյընաց ու տըհանց կըլխին կաղնըեց, վըենց վըեր մարթ էրկու հավ փըռնըի. մի ծըեռովը մընի ճըվիցը, մի ծեռովն էլ՝ մընի ու կախ արած պիրի, տըհենց էլ նա տըհանց ճըվիցը փըռնած սուրավ էրկուսին էլ իրար հետ շըպըրտըեց քըցեց կըրակի կոխքը ու նորից քյընաց

իրան տունը, մի տաշտի պըես պա̈ն պիրավ տըրա̈վ կըրակի կըշտին ու էտ կըլմըրած շամփուրնէրիցը մինը կոխեց մի հնդյներիս փորը ու մի ծըեռով կըրակին պահեց, վըեր խըրովըի։ Հըմի տա̈ մի կյոռըմ ա, մի կյո̈ռըմ ա, վըեր աստոծ հեռու տանըի, ես էլ իրեսըս թեքել եմ պատըին, վըեր տըենամ վըեչ, համա դե տակիս ցեթել եմ. մըեռած եմ, սաղ չեմ։ Էտա մըխելան եդը, տըրա̈ ծըինը կըտրեց. առաչ վըետները բա̈լգի-բա̈լդի աներ՝ էն էլ եա կտրից։ Տըրա̈ն խըրովըեց, ճընջըռոշտոցը քըցել ա ըտեղ, վըեր մարթի կյըլէխ ա ցավըմ ֆըետիցը։ Սրա̈ն տըրա̈վ տաշտըմը աղ արավ վըրեն ու կերավ։ Քյընա̈ց մըտավ տուն, գյիդըմ չեմ՝ ինչ էր խըմըել, պըերա̈նը սըրփիլեն էկավ։ Էն մի շամփուրը ծըեռը կալավ թըչէ, էտ հընդյերս ուզըեց փախչի։ Տա̈ ծըեռը քըցեց տըրա̈ շըլընքիցը փըռնըեց ու պիրավ մոտըցրավ էտ շամփուրին, վըեր քըմակի ղոլովը տըվավ՝ ղաքովը տուս էկավ։ Տըրա̈ կյըռկըռոցըն էլ վեր արավ. խըրովըեց, կերավ, շամփուրը քըցեց էն ղոլը ու կըրակի ղըրաղին պըրանվըեց։ Մընացըել ա էն մի շամփուրը կըրակի միչին, ես էլ կըրակի ղըրաղին գյիդըմ եմ, վըեր էտ էլ իմ մահն ա։ Մըիտկըն եմ անըմ, մըտածըմ եմ՝ ի՞նչ հընար քըթնըեմ, վըեր ըստիյան ազատվըեմ, հընար չիկա, գյիդըմ չեմ։ Տա̈ էլ խորը խըռըմփըմ ա, հա̈նիրն էլ կըրակի պեծերը էս ղոլ, էն ղոլ ա տանըմ։ Որոշեցի, վըեր ինչ ուզըմ ա ըլի էտ լոմը կոխեմ տըրա̈ աչկը, համա կոխկի վըրա̈ ա պըրանված, մըտածըմ եմ ու մըտիկ անըմ, թե վըե՞նց անըեմ՝ թըուշըմը մըտցընեմ։ Էտ մըտածըլուս վախտը տա̈ շուռ եկավ միշկի վըրա̈ պըրանվըեց։ Հըլե տա̈ միշկի վըրա̈ ընգյավ, էլ էս ժա̈մա̈նա̈կ չի կորցըրի, վըե կցա փըփաղովըս էրկու ծըեռով էտ շամփըրի տըտնըիցը փըռնեցի, վըենց վըեր մարթ տափըի միչին շախմա ցից անըի, նըհե ցից աըի տըրա̈ ճըկատըի միչի էն մի աչկըմը ու փախա։ Տա̈ մի «օֆ» արավ, ըղղավեց, էտ շամփուրը քաշեց քցեց էն ղոլը ու ընգյա̈վ եդնես։ Էնքան էտ վըշխըրնըեկրի միչին եդնես պըտըտեց, վըեր ըղզա̈րեց. դե ինքը՝ քոռ, ես՝ սաղ, քյընըմ ա, դես ա դիպչըմ, դեն ա դիպչըմ ու կարըմ չի ինձ քըթնի հենց վըեր կյա̈լիս ա մոտանըմ, ես մի ղոլըի վըրա̈ ղըրաղ եմ ըլըմ։ Իմ բախտրիցն էլ տըեղը մեծ ա։ Էտա վըեր տըեհավ կարըմ չի փըռնըի, վըըշխարի կեստըեղը կաղնեց ու սըհե արավ. «Սեյիզ, ես հիվանդ եմ, էքուց վըեչխարը քու ումուդին եմ թող անըմ կարալ չեմ կյա̈մ, կըրծցնես՝ պիրես»։ Սորեց ու ինքը քյընա̈ց կըրակի քըշտին նստեց, ես էլ քյա̈ցի կամաց էտ սեյիզին քըթա̈, տարա վէրի ծըերըմը մորթեցի, մաշկեցի, մորթըին լա̈վ հաքա ու ճամփա եմ պահըմ մըչկը լիսա-

Ճուլր։ Միսացավ Թրչէ, տա էս։ քարը վըև կալավ, տըրավ ղըըաղ
շիք արավ էտ ծակի ուշքին ու վըեչխարը մին-մին «հո՜, հո՜, հո՜
հո՜» անրիլով շեքի ղաշղուլը տնից ա կըցնըմ։ Ինքըսն ճամփա պա-
հողի վըեռ չիմ տուս Լկան, ես էլ կամաց վերչի վըչխարի հետ
Թաթրևրիս վըրա չորս վըետնանըի տարած կլալիս եմ։ Տա ծըեռը
բըսեց միչկիս ու ասըեց. «Մի տուս արի քեզ Թափ տու ու ընգլի
աղաք, տըենամ ղորը դես տանըիլ»։ Հըլե տուս էկա տուրը, մոր-
Թրին հանըեցի մի քիչ հեռացա, շըպըրտրեցի. տափի ճըկատովը
տըվըրի, ասըեցի՝ քու տեըն էլ, քու սեյիզին էլ, դե հըմի քըընա։
Տա կըտաղեց ու ընգյավ եդնես։ Էնքան տըըան չըըշարեցի՝ մըչեը
եդնես տարա միքարափըի կըլխով տըըան դըվըեր քըցեցի։ Տա
խըըդըփըշուր ըլավ, ես եա եկա, նորից ըտի ազատ շունչ քաշե-
ցի։ Մըտա տըըա տունը, ինչքան վըեսկեղեն, ինչքան լավ-լավ
պաներ. չիմ հըվաքեցի լըցըի մեշոկը, շըլակեցի ու էտ վըեչխարի
սուրուն ռամակս քըցեցի պիրի տունս Էտ էր ու էտ, էտ օրից ես
վըերԹըմ կեըա, վըեր էլ էտ ղայդի պան չի անըեմ. իմ մըխսը ու-
տըևմ լավ ա, քանց Թե էտ ղայդի կործով ըլեմ։ Ասըեցի՝ ախպըեր
իրեք հետ քյացել եմ մահի տուռը, եա եկել, հըմի հու միշտ տա-
տը կյաԹա չի պիրիլ. օհո՜ րոլ ըլավ, Թոքա՜, Թոքա՜։

Հըմի, տըղեք շան, ծըեզ եմ ասըմ. մարԹ կա քյըևըմ ա կյը-
լուխ ա պիըըմ, մարԹ էլ կա քյըևըմ ա՝ կյլուխն ա քաղա տալըի։
Էկեք ամեքիտ հինգ վըեչխար տամ, առեք քյացեք ու տուք էլ Թո-
րա արեք էտ փեշակը։ Տա փեշակ չի, վըեր տուք պըըըցնըմ եք,
ես գյիդըմ եմ՝ տուք ընչի՞ եք ման կյալի ու խի՞ եք էկել ըստի»։

Ամըեքս հինգ վըեչխար վըե կալանք, էկանք։ Էն օրից ես էլ
ասըեցի՝ ախպըեր էտքան փոըցանքը էտ մարԹը տըեհել էր, փոըց-
ված մարԹ էր, նա վըեր ղըզվըել ա, ես էլ շան տըղա ըլեմ, Թե
ըսօրևց եդը աչկս հարամ մալի վըըա քըցեմ։